

ԿԱՐԻՆԵ ՄԱՐԶԱՆՅԱՆ

ՀԱՅ ԿԵՆՍՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՂՆԹԱՅՐ XIX ԳԱՐԻ  
ԱՌԱՋԻՆ ՀԻՄՆԱՄՅԱԿՈՒՄ\*

Հայաստանի միացումը Ռուսաստանին մեծ հնարավորություններ ստեղծեց գիտության տարրեր բնագավառների առաջընթացի համար: Սկսեցին զարգանալ բնական գիտությունները՝ հատկապես բժշկությունը և այդ շրջանում նրա հետ սերտ կապի մեջ գտնվող կենսաբանությունը, որը որպես առանձին գիտություն դեռ չէր ձևավորվել:

Կենսաբանության զարգացման մինչ նախասովետական շրջանը Հայաստանում կարելի է պատկերացնել հոսատիճան շրջափուլի ձևով: Առաջին աստիճանում այս բնագրկուն գիտությունը, ինչպես Հայաստանում, այնպես և Ռուսաստանում կրել է նկարագրական բնույթ: Զարգացման երկրորդ աստիճանում իրավիճակն այնպիսին էր, որ բուսաբանական և կենդանաբանական արդեն կուտակված բազմաթիվ նյութերը դասակարգման կարիք էին դգում: Եվրոպայում և Ռուսաստանում շրջանառության մեջ են դրվում մի շարք դասակարգումներ, որոնցից ամենակայուն տեղը գրավեց Կ. Լիննեյի առաջարկածը: Հայաստանում բնագիտության զարգացման այդ աստիճանը կապված է Ս. Շահրիմանյանի անվան հետ: Երրորդ աստիճանն արդեն առնչվում է Զ. Գարվինի նոր էվոլյուցիոն ուսմունքի հետ, մի ուսմունք, որը պատշաճորեն ընդունվեց Հայաստանում:

Մենք կանգ կառնենք առաջին երկու աստիճանների վրա:

Հարուստ և բազմազան հայ հին դրականության մեջ հաճախ են հանդիպում կենսաբանությանը վերաբերող հետաքրքիր տեղեկություններ և տրվյալներ: Սկսած Բարսեղ Կեսարացու աշխատություններից, որոնք դեռ վաղ միջնադարում թարգմանվել էին նաև հայերեն, կենսաբանության հարցերը գրավել են գիտնականների ուշադրությունը: Բազմապիսի կենսաբանական դիտումներ ենք հանդիպում Եզնիկ Կողբացու, Ազաթանգեղոսի, Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Ա. Շիրակացու աշխատություններում: Նշանավոր «Աշխարհացույցում» բերվում են բավական հետաքրքիր տեղեկություններ պատմական Հայաստանի գավառների բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ: Հարկավոր է նշել Գրիգոր Տաթևացու միջնադարյան հանրագիտարանը՝ «Հարցմանց գիրքը» և XVII դարի սկզբի հեղինակ Աբրահամ Պոլսեցու «Պատմութիւն անասնոց» աշխատությունը: Վերջինս, ըստ Ա. Տեր-Պողոսյանի, համարվում է հայ առաջին կենդանաբանական ձեռնարկը և իր մակար-

\* Ձեկուցում՝ կարգացված Մաշտոցի անվան Մատենադարանի հորելյանական նստաշրջանում՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին:

դակով չի դիջում այն ժամանակվա եվրոպական գիտական կենդանաբանությունը նվիրված գործերին<sup>1</sup>:

XVIII—XIX դարերում լույս են տեսնում կենսաբանական տեղեկություններ պարունակող գրքեր: Հատկապես ուշագրավ է 1810 թ. Վենետիկում հրատարակված Հ. Ստեփանյան Վարատնեցու «Տեսարան աշխարհի բովանդակիչ բնական և բարոյական գիտություն» խորագրով աշխատությունը:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կենսաբանական հարցերը որոշակի տեղ են գրավում եվրոպական և ռուսական համալսարաններում կրթություն ստացած հայ բժիշկների՝ Պետրոս Քալանթարյանի, Հովակիմ Օղուլուխյանի, Միրայել Ռեստենի (Պատկանյանի), Ստեփանոս Շահրիմանյանի աշխատություններում:

Մինչ Հայաստանը գտնվում էր օտարերկրյա լծի տակ, Ռուսաստանում աշխուժորեն զարգանում էին բնական գիտությունները: Բժշկության աճող պահանջներին զուգորդված՝ զարգացման ընթացքի մեջ էին մղել կենսաբանության որոշ մասնաճյուղեր, հատկապես բուսաբանությունը և առաջին հերթին դեղաբույսերի ուսումնասիրությունը: Ավելանում էր գիտական գրականության թիվը, լույս էին տեսնում տարբեր երկրամասերի «Ֆլորաներ»՝ բուսաբանական բառարաններ: 1781 թ. Մոսկվայում հրատարակվեց Անդրեյ Մեյերի «Բուսաբանական մանրամասն բառարանը կամ տրամբանիկը»<sup>2</sup>, որտեղ տրված են նկարագրված բույսերի բուժական նպատակով օգտագործելու ձևերը: Իսկ Պետերբուրգում 1804 թ. լույս տեսավ Ն. Ս. Մարսիմովիչ-Ամբոգիկի «Նոր բուսաբանական բառարանը» լատիներեն, գերմաներեն և ռուսերեն լեզուներով<sup>3</sup>, ապա Ն. Ա. Անենկովի «Ռուսական բույսերի ռամկական աշխատություն»<sup>4</sup> (1858 թ.) աշխատությունը և այլ բառարաններ:

Կազմակերպվում էին բազմաթիվ արշավախմբեր դեպի Ռուսաստանի տարբեր ծայրամասերը բուսական և կենդանական աշխարհի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու նպատակով:

1829 թ. Պասկևիչի հանձնարարությամբ Հայկական մարզի վիճակը նրկարագրելու նպատակով, Հայաստան է գալիս Ի. Ի. Շոպենը: Բավական կարճ ժամանակում հավաքելով բազմաթիվ հետաքրքիր նյութեր և հանգամանորեն ուսումնասիրելով Հայաստանի պատմության, աշխարհագրության, կենդանաբանության և բուսաբանության մասին առկա տեղեկությունները, Ի. Ի. Շոպենը ստեղծեց կոթողային մի աշխատություն՝ «Հայկական մարզի պատմական վիճակը նրա Ռուսաստանին միացման շրջանում»<sup>5</sup> գիրքը, որը լույս տեսավ 1852 թվականին: Գրքում հատուկ գլուխ է նվիրված Հայաստանի կենդանական աշխարհին, որի մեջ հետաքրքրական տեղեկություններ կան վայրի և ընտանի կենդանիների մասին: Հայաստանի տարածքում եղել են մեծ քանակությամբ եղջերուներ, այծյամներ, վայրի ոչխարներ, վարազ, արջ, լուսան, կզաքիս և շատ ուրիշ կենդանիներ. կան նաև տեղեկություններ թրո-

1 Ա. Տեր-Պաղոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960.

2 А. Мейер, Ботанический подробный словарь или травник, М., 1781.

3 Н. Максимович-Амбодик, Новый ботанический словарь, СПб., 1804.

4 Н. Анненков, Простонародные названия русских растений, М., 1858.

5 И. Шопен, Историческое состояние Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852.

շունների, ձկների (հատկապես իշխանի) որդան կարմրի մասին, ըստ որում բերվում են նաև դրանց լատիներեն անունները:

Ինչ վերաբերում է բուսական աշխարհին, ապա պետք է նշել հետևյալը. Ի. Շոպենը մեջ է բերում բազմաթիվ բույսերի անուններ հայերեն (ոուսերեն տառադարձությամբ), ոուսերեն ու լատիներեն լեզուներով, հայտնելով, որ այդ տեղեկությունները քաղված են Ս. Ա. Տեր-Ղուկասովի կողմից իրեն տրամադրված Հայկական բուսաբանական մի հին բառարանից: Մենք առիթ ենք ունեցել արդեն նշելու, որ այդ ցուցակն ամբողջությամբ համընկնում է Ս. Շահրիմանյանի «Տնկաբանություն կամ Ֆլորա Հայաստանի» աշխատության առաջին խմբագրության (Մատենադարան, ձեռ. № 9856) մեջբերված բույսերի ցուցակի հետ<sup>6</sup>:

1835 թ. Ռուսական կայսերական ակադեմիայի կողմից գիտական առաջադրանքով, մասնավորապես որդան կարմիրը ուսումնասիրելու համար, Հայաստան է գալիս ակադեմիկոս Համելը. նրա աշխատությունը լույս է տեսնում 1853 թ.<sup>7</sup> «Արարատյան որդան կարմրի մասին» վերնագրով: Ակադեմիկոս Կարլ Բերրը, իր արշավախմբի հետ ուսումնասիրում է Սևանա լիճը, նրպատակ ունենալով հետազոտել ձկների ֆաունան, նրանց տեսակային կազմը:

Այս ժամանակաշրջանն արդյունավորվեց գիտական մի քանի աշխատությունների ոուսերենից հայերեն կատարված թարգմանություններով: Արժեքավոր էին հատկապես Նեստոր Մաքսիմովիչ Ամբողիկի «Բժշկական իրախոսություն»<sup>8</sup> և «Բնագննություն կամ բնութենական հանգամանք մարդկայինը»<sup>9</sup> գրքերի Սրապիոն Առաքելյանի կատարած թարգմանությունները:

Հ. Արզանյանցը թարգմանել և 1834 թ. Թիֆլիսում հրատարակել է «Առձեռն բժշկարանի պէտս գիւղականաց կամ բժշկական խրատք վասն արքունի գիւղականաց»<sup>10</sup>:

Թարգմանություններին զուգընթաց որոշ քայլեր են կատարում հայ հեղինակները սևիական ուսումնասիրություններ ներկայացնելու ուղղությամբ: Սակայն, ինչպես և սպասելի էր, նման աշխատանքները ծավալվում էին Հայաստանի սահմաններից դուրս: Ինչպես իրավացիորեն նշում է բժշկական գիտության խոշոր պատմաբան Լ. Ա. Հովհաննիսյանը, 1800—1860 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում Հայաստանում չի հրատարակվել ոչ մի բժշկական պարբերական կամ գիրք<sup>11</sup>: Բժշկական աշխատություններ գրվում էին միայն այն հայ մասնագետների կողմից, որոնք ապրում էին իրենց հայրենիքից հեռու: Նույնն էր կացությունը և կենսաբանության բնագավառում:

1793 թ. նոր նախիջևանում լույս է տեսնում Պետրոս Քալանթարյանի

<sup>6</sup> К. Марджанян, О рукописях труда С. Шаримаяна «Ботаника, или флора Армении», Вестник общественных наук, 8, 1972, 66—74.

<sup>7</sup> Гамель, Об Араратской кошенили, Петербург, 1853.

<sup>8</sup> Н. М. Амбодик, Медицинская сущность, СПб., 1833.

<sup>9</sup> Н. М. Амбодик, Физиология или естественная история о человеке, СПб., 1814.

<sup>10</sup> Ա. Լալայան, Ռուսերենից հայերեն թարգմանված մի տպագիր բժշկարանի մասին ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (բիոլ. և գյուղատնտ. գիտ), հ. 7, № 10, 1954 թ. էջ 93—97. «Сельский домашний лечебник или врачебные наставления для государственных крестьян».

<sup>11</sup> Л. Оганесян, История медицины в Армении, т. IV, 1947, стр. 23.

(1735—1798 թթ.) «Բժշկարան համառոտ» գիրքը: Հեղինակի կրթության մասին կան տարբեր կարծիքներ: Վ. Թորգոմյանը<sup>12</sup> և Լ. Հովհաննիսյանը<sup>13</sup> գրտնում են, որ նա ստացել է եվրոպական կրթություն, իսկ Ա. Արշարունին<sup>14</sup> հիմնավոր կարծիք է հայտնում Պ. Քալանթարյանի Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտած լինելու մասին: Նա Պ. Քալանթարյանին համարում է Մոսկվայի համալսարանի առաջին հայ սանը: 1803 թ. 12 հայ և վրացի երիտասարդներ մեկնում են Մոսկվա, համալսարանի բժշկական ֆակուլտետն ընդունվելու նպատակով. դրանց թվում էր նաև Թիֆլիսում հայտնի բժիշկ Թաթուլի որդին<sup>15</sup>: Ժ. Մանուկյանի վերջերս հայտնաբերած արխիվային տվյալների համաձայն, դեռևս 1802 թ., Պետերբուրգի բժշկավիրարուժական ակադեմիա է ընդունվել Սողոմոն Հարությունի Ակիմովը, որն ալարտել է այդ հաստատությունը 1808 թ. և աշխատանքի անցել Թիֆլիսում<sup>16</sup>:

Այսպիսով, բանի դեռ անառարկելի փաստեր չեն հայտնաբերված Պ. Քալանթարյանի կրթության վայրի մասին, ուստի բժշկագիտության դոկտորի առաջին հայ սանը պետք է համարել Ս. Ակիմովին:

Հետաքրքրություն է ներկայացնում Պ. Քալանթարյանի բժշկարանին կցված դեղամիջոցների բառարանը, ուր բերվում են դեղաբույսերի նկարագրություններ: Աշխատությունը գրված է գրաբարով, սակայն տրվում են բույսերի լատիներեն և հաճախ նաև ուսերեն լեզվով անունները:

Հովակիմ Օղուլլուխյանի (1773—1815) «Նիւթ բժշկական» գրքում, (Վենետիկ, 1806), նույնպես կան հետաքրքիր կենսաբանական տեղեկություններ: Հ. Օղուլլուխյանը թվարկում է 228 դեղաբույսերի հայերեն և լատիներեն անուններ և տալիս դրանց համառոտակի նկարագրությունը:

Միրայել Ռեստենը (1774—1844) ավարտել է Պիզայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1822 թ. Վենետիկում լույս է տեսել նրա «Բժշկականությունը», որն ընդգրկում է 2500 անուն՝ տարբեր հիվանդությունների, դեղերի, բույսերի, միներալների, ցնդող հեղուկների, որոշ օդային, գետային և ջրային կենդանիների, մարմնի մասերի՝ լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, արաբերեն, պարսկերեն, տաճկերեն և հայերեն բացատրություններով: Ըստ որում բույսերի անունները՝ 700 են. մանրամասնորեն նկարագրված են բույսերի մասերը, օգտագործվել են բաղմամբիվ նոր հայկական բուսաբանական տերմիններ:

Անտարակույտ, կենտրոնական տեղ է գրավում խոշոր հասարակական գործիչ, հայտնի բժշկապետ և բուսաբան Ստեփանոս Շահրիմանյանը (1766—1830), որի կյանքին, գործունեությանն ու ծառայությունը, հատկապես «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» (1818) մեծարժեք ձեռագիր աշխա-

12 Վ. Թորգոմյան, Բժշկարան Պետրոսի Քալանթարյան, «Հանդես ամսօրյա» 1, 1892, 11:

13 Մ. Օգանեսյան, Նշվ. աշխ., հ. 3, էջ 192:

14 Ա. Արշարունի, Մոսկվայի համալսարանը ու հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955, էջ 7—12:

15 А. Лалаян, Первая медицинская книга, переведенная с армянского языка на русский, «Советское здравоохранение», 6, 1958, стр. 50.

16 Ժ. Մանուկյան, Նորահայտ նյութեր հայ-ուսումնական կապերի պատմությունից, Լրագրեր ՀՍՍՀ ԳԱ, 1, 1978, էջ 98—103:

տուժյանը մենք անդրադարձել ենք առանձին հոդվածներով<sup>17</sup>: նա ծնվել է Քիֆլիսում, սովորել Քրիեստում, ապա Վենետիկի համալսարանում, որից հետո մեկնել է Հունաստան: Ժանտախտի ժամանակ, 6 տարի աշխատելով Կոստանդնուպոլսում, գրել է «Անդեղեայ ժանտախտի» աշխատությունը (Մատենադարան, ձեռ. № 8303):

Ուշագրավ է, որ Ս. Շահրիմանյանը, եվրոպական բժշկական կրթություն ստանալով հանդերձ, 1807 թ. մեկնում է Մոսկվա և հունվարի 30-ին քննություն հանձնում համալսարանի բժշկական ֆակուլտետում<sup>18</sup>: Պետք է ենթադրել, որ այդ անհրաժեշտ է եղել 1801 թ. Ռուսաստանի հետ միավորված Վրաստանում բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունք ստանալու համար: «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» մենագրությունից պարզվում է, որ Ս. Շահրիմանյանը հաճախ է եղել Մոսկվայում և Պետերբուրգում: Վերջինիս բուսաբանական այգում նա ուսումնասիրել է որոշ դեղաբույսեր և լաջնորեն օգտվել Կայսերական գիտությունների ակադեմիայի գրադարանից, որտեղ ուսումնասիրել է հատկապես ռուսական ֆարմակոլոգիայի վերաբերյալ հին ու նոր գրքեր:

1815 թ. Ս. Շահրիմանյանը ակտիվորեն մասնակցում է վրացահայության ազգային-հասարակական կյանքին: Հայտնի բժշկապետի կյանքի այդ ժամանակաշրջանը կապված է ներսես Աշտարակեցու գործունեության հետ:

1817 թ. Ս. Շահրիմանյանը Քիֆլիսում առնչվել է դեկաբրիստ Ն. Մուրավյովի հետ, որն իր օրագրում գրել է. «Я познакомился с одним армянином, доктором медицины, который 17 лет в Италии учился... 30-го (декабря 1817 г.)... мы пошли к Шериманову. Человек сей занимателен. У него порядочная библиотека, состоящая большей частью из книг химических, ботанических и лечебных. Он знает по-русски, по-латински, по-итальянски, по-французски, по-арабски, по-армянски, по-грузински, по-турецки, по-персидски и по-татарски. Он целый день занимается, живет по-европейски, чудачком—участь всех ученых людей»:

Ն. Մուրավյովը թուրքերեն էր սովորում Ս. Շահրիմանյանի մոտ և շատ գոհ էր, ինչպես ինքն է նշում, նրա ուսուցման եղանակից: Ապա նա շարունակում է. «12-го (марта 1818 г.)... после обеда,—գրել է Մուրավյովը,—пошел к Шериманову и начал с ним делать российско-турецкий лексикон...»<sup>19</sup>:

Յավոր, այդ ուս-թուրքերեն բառարանը, որ ստեղծվում էր հայ և ռուս մտավորականների համագործակցությամբ, դեռևս չի հայտնաբերվել:

Ինչպես պարզվում է հայր և որդի Գրիգոր և Սիմոն Լոռու-Մելիքյանների նամակագրությունից (Մատենադարան, ձեռ. 9295), Ս. Շահրիմանյանը 1819

<sup>17</sup> Կ. Մարձջանյան, Степанос Шариманян, «Историко-филологический журнал», 3, 19971, стр. 236—246; Կ. Մարձջանյան, Терминологический ботанический глоссарий С. Шариманяна, Тр. IV Закавказ. конф. по истории науки, Ереван, 1974, стр. 448—453. Կ. Մաբաջանյան, Ս. Շահրիմանյանի «Տնկարանութիւն կամ փղորայ Հայաստանի» աշխատության աղբյուրները», Բնագիտ. և տեխնիկայի պատմությունը Հայաստանում: Գիտական աշխատությունների ժողովածու, 6, 1976, էջ 240—248:

<sup>18</sup> Ա. Лалаян, Русско-армянские медицинские связи, Автореферат докт. диссертации, Ереван, 1966, էջ 6—8:

<sup>19</sup> В. Парсамян, Декабристы в Армении, Ереван, 1975, стр. 42—43.

թվականից պրադվել է մանկավարժական գործունեությանը թելափում, անդի ճեմարանում դասավանդելով բժշկություն և բուսաբանություն:

Ս. Շահրիմանյանը, որպես բժշկապետ, համակովկասյան հոչակ էր ըստացել: Այդ իրողությունը հաստատվում է վերը հիշատակված նամակների մեջ առկա մի շարք փաստերով, որոնցից են, օրինակ, հետևյալները. «Նորին դերագանցութիւն Շահրիմանով տակաւին կայ ի Շուշի, և ջանայ բժշկելի զՄենհախուլի խանն՝ վարակեալն յափրողիտական» կամ «Տէր բժշկապետ Շահրիմանյան տակաւին կայ ի Ղարաբաղ, և գնացել կայ անդի ի սուրբ ուխտս Տաթևոյ՝ առ միարապօլիտ նորայ, ի բժշկելի զնա ի կաթուածահարութեանց»<sup>20</sup>:

Ս. Շահրիմանյանը մահացել է խոլերայից՝ 1830 թ. հոկտեմբերին, Թիֆլիսում: «Եւ ինքն բազմաշխատ տէրն ձեր, հայր և վարժապետ բարեացապաշտն Շահրիմանով ամսոյս 18-ին լքեալ զերկաւոր դիր կեանս, վերնայնոյն արժանաւորեցաւ, որոյ զհոգին Տէր լցցէ ողորմութեամբ իւրով, և այն կօլեր ցաւօք, որ սկիզբն առաւ ամսոյս սկզբանն և տեւաց մինչև ց25 կամ ց24, անհնարին կտորածս արարեալ, որոց զհաշիւ տակաւին ոչ է յայտնի: Տուն վարժապետիդ կնքեցաւ մինչև ցգալ նորին փեսայի՝ Ալեքսանդր Իւանիչի, որ է Սղնախու լեկաոն, առ որ դու գրեցիր զթուղթ, որ այժմ ստացաւ աստ դօկտորութիւն և գնացեալ կայ ի Լանքորան, որ է միանգամայն և ժառանգ նորա: Գոյր ոչինչ գոյին նորա, միայն գրեանքն, մեկ բաղ և մեկ դուրան. տան կայքն և երկու հարիւր թուման դրամ»: Այսպես է գրում Գրիգոր ԼսոուՄելիքյանը իր որդուն:

Մեծ է Ս. Շահամիրյանի դերը Հայաստանում բուսաբանության զարգացման գործում: Նրա «Տնկարանություն կամ փղորայ Հայաստանի» (Մատենադարան, ձեռ. № 6267) աշխատությունը հանդիսանում է XIX դ. սկզբի բուսաբանական տվյալների մի հարուստ շտեմարան: Նկարագրելով պատմական Հայաստանի 800 տեսակ դեղաբույսեր, հեղինակն իր ժամանակի ամենաբարձր մակարդակով մեկնաբանում է դրանց անունները, և բացի բուսաբանական տեղեկություններից, բերելով նաև լեզվաբանական, պատմական, նույնիսկ բանասիրական տվյալներ դրանց ծագման, տարածման ու օգտագործման եղանակների մասին:

Կովկասում առաջին անգամ Շահրիմանյանն է իր մենագրության մեջ կիրառել հանձարեղ Կ. Լիննեյի բույսերի դասակարգությունը<sup>21</sup>:

Ս. Շահրիմանյանի երրորդ աշխատության՝ «Նոտերի և դեղաբույսերի կրճատ բուսաբանական բառարանի» մասին, որը գրվել է հայերեն լեզվով և թարգմանվել վրացերենի, առայժմ չունենք բավարար տեղեկություններ<sup>22</sup>:

Գոյություն է ունեցել նաև Ս. Շահրիմանյանի մեկ այլ աշխատություն՝ «Բառգիրք բժշկական բառից՝ արաբացի, պարսկական, տաճկական, հայ և

20 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9295, էջ 173 և 186:

21 Յ. Мулкиджанян, К. Марджанян, Первая на Кавказе монография по флоре (1818). Тезисы докл. XIII Международного конгресса по истории наук. Мат-лы по истории химии и биологии. Москва, 1971.

22 К. Марджанян, Степанос Шариманян «Историко-филологический журнал», 3, 1971, стр. 245.

լատին թարգմանութեամբ» խորագրով, որի մասին տվյալներ են պահպանվել Գալուստ Շիրմազանյանի մոտ պահված ձեռագիր գրքերի ցուցակում<sup>23</sup>։

Ամփոփելով արժարժված իրողությունները՝ դժվար չէ եզրակացնել, որ Հայաստանի միացումը Ռուսաստանին նպաստավոր պայմաններ ստեղծեց կենսաբանության և բժշկության առավել զարգացման համար։ Այն մասնագիտական գրականությունը, որ ստեղծվեց հիշյալ ժամանակամիջոցում, անվերապահորեն ունի ճանաչողական նշանակալի արժեք։

К. МАРДЖАНИЯН

## ЭТАПЫ РАЗВИТИЯ БИОЛОГИИ В АРМЕНИИ В ПЕРВОЕ ПЯТИДЕСЯТИЛЕТИЕ XIX ВЕКА

(Резюме)

Вхождение Восточной Армении в состав России создало благоприятные условия для развития естественных наук, в том числе медицины и биологии. Началось активное исследование растительного и животного мира Армении, предпринятое русскими учеными (И. Шопен, Гамель).

В Армении в этот период переводятся некоторые естественно-научные книги с русского языка на армянский (Н. Максимовича-Амбодика). Появляется разнообразная медицинская и биологическая литература, написанная армянами, получившими образование в Европе и России и проживающими за пределами своей родины (П. Калантарян, И. Огуллухян, М. Рестен-Патканян, С. Шариманян). Первые представители армянской молодежи отправляются в Москву и Петербург с целью получения медицинского образования и среди них—первый дипломированный врач С. Акимов.

В тесной связи с медициной стала развиваться биология, в частности ботанические знания, которые в Армении, как и в России, в начальный период носили описательный характер. В дальнейшем началась систематизация и классификация существующего материала. В Армении этот период связан с именем С. Шариманяна, о жизни и деятельности которого в статье приводятся некоторые малоизвестные данные.

К. МАРДЖАНИЯН

## LES ÉTAPES DU DÉVELOPPEMENT DE LA BIOLOGIE EN ARMÉNIE À LA PREMIÈRE MOITIÉ DU XIX<sup>e</sup> SIÈCLE

(R é s u m é)

Le rattachement de l'Arménie Orientale à la Russie a créé des conditions favorables pour le développement des sciences naturelles, de la

<sup>23</sup> Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 17։

médecine et de la biologie entre autres. Les savants russes (I. Chopen, Hamel.) ont commencé l'étude active du monde végétal et animal de l'Arménie.

Certains ouvrages relatifs aux sciences naturelles ont été traduits en arménien à cette époque (N. Maximovitch-Ambodik). Une littérature médicale et biologique variée a paru, écrite par les Arméniens ayant fait leurs études en Europe ou en Russie et vivant à l'étranger (P. Kalandarian, H. Oughoulloukhian, M. Resten-Patkanian, S. Chahrimanian). Les premiers représentants de la jeunesse arménienne sont allés à Moscou ou à Pétersbourg pour y faire des études de médecine et parmi eux le premier médecin diplômé S. Akimov.

En contact étroit avec la médecine la biologie commence à se développer, en particulier la botanique qui en Arménie, comme en Russie, avait au début un caractère descriptif. Par la suite commencent la systématisation et la classification du matériau existant. En Arménie cette période est liée au nom de S. Chahrimanian, sur la vie et l'activité duquel l'auteur de l'article fournit certaines données peu connues.